Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ << Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գանձակի Հ. 1 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում <<Գերմաներեն>> /18 դասաժամ/ , <<Հայոց լեզու>> /7դասաժամ/, Դասվար /8 դասաժամ/, <<Մաթեմատիկա>> /17 դասաժամ/ առարկայներ ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում, ինքնակենսագրություն (Ձեւ 1),

- մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

-Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում).

-Հանրակրթության մասին օրենքի 26-րդ հոդվածի պահանջով հերթական ատեստավորման արդյունքում աշխատանքից ազատված լինելու դեպքում՝ հերթական ատեստավորումն անցած լինելու մասին տեղեկանք.

-Հանրակրթության մասին օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (առկայության դեպքում նաև՝ 2-րդ կետով) պահանջվող համապատասխան փաստաթուղթ.

-Հանրակրթության մասինե օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի

պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք: Փաստաթղթերն ընդունվում են տույն թվականի սեպտեմբերի 23-ից հոկտեմբերի 6 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա, 2026թվականի հոկտեմբերի 9-ին՝ ժամը 10:00-ին, Գանձակի Հ.1 միջնակարգ դպրոցում.

հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ. Գանձակ, Հովհաննես Թումանյան 4:

Տեղեկությունների համար զանգահարել - 077668812 հեռախոսահամարով: